Արտատպված է՝ Ա. Տոլստոյ, Ինժեներ Գարինի հիպերբոլոիդը; Աելիտա, վեպեր, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1982:

Ալեքսեյ Տոլստոյի գիտաֆանտաստիկ վեպերը

Ռուս ականավոր գրող Ալեքսեյ Տոլստոյը մեծ ավանդ ունի հայրենական մշակույթի գանձարանում: Յուրահատուկ, բարդ ուղիով նա եկավ սովետական գրականություն և իրավամբ արժանի տեղ գրավեց, իբրև խոսքի ժամանակակից խոշորագույն վարպետներից մեկը: Վառ տաղանդի տեր արվեստագետն ստեղծեց ամենատարբեր ժանրերի երկեր՝ պատմական վեպեր, պատմվածքներ, պիեսներ, քաղաքական պամֆլետներ, հրապարակախոսական հոդվածներ:

Նրա «Տառապանքի ուղիներով» եռագրությունը, «Հաց» վիպակը, «Պետրոս Առաջին» վեպը ժողովրդի լայն ճանաչմանն են արժանացել, դարձել միլիոնավոր ընթերցողների սիրած գրքերը, մտել սովետական գրականության ոսկե գանձարանը:

Ալեքսեյ Տոլստոյը խոշոր վաստակ ունի նաև գիտաֆանտաստիկական վեպի ասպարեզում: Այդ ժանրի նրա ստեղծագործությունները՝ «Աելիտա» և «Ինժեներ Գարինի հիպերբոլոիդը» հայտնի վեպերը սկզբնավորեցին սովետական գիտագեղարվեստական ֆանտաստիկան, որ իր վառ արտահայտված հատկանիշներն ունի:

Գիտաֆանտաստիկական գրականության երկերի սյուժեները սովորաբար կառուցվում են մարդու և բնության բախման վրա, բացահայտում գիտական և տեխնիկական հայտնագործումների հրապուրիչ աշխարհը: Միաժամանակ գիտաֆանտաստիկական շատ վեպերում, առանձնապես 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի գործերում, պարզորոշ ուրվագծվում է սոցիալական թեման: Ա. Կոնան Դոյլի «Կորուսյալ աշխարհ», Բ. Քելերմանի «Թունել», Հ. Ուելսի «Ժամանակի մեքենան», «Աշխարհների պայքարը» երկերում տարբեր կերպ են բացահայտվում կապիտալիստական հասարակության հակասությունները, որ սովորաբար միայնակ հերոսին հասցնում են շրջապատող միջավայրի հետ ժամանակավոր կամ մշտական բախման:

Սովետական գիտաֆանտաստիկական վեպը ապագա տեխնիկական հայտնագործումների աննախադեպ հեռանկարներ բացելով, հատկանշվում է գիտական և հասարակական թեմայի նոր լուսաբանմամբ, հիմնական հերոսի նկարագրի պրոբլեմի նոր լուծմամբ: Եթե ավանդական բուրժուական վեպում իբրև կենտրոնական գործող անձ հանդես է գալիս առավելապես ուժեղ, միայնակ անհատը, ապա՝ սովետական գրականության մեջ առաջին պլան քաշվեց մի այլ հերոս՝ նոր հասարակության ներկայացուցիչը, որ իրեն անբաժան է զգում սովետական ժողովրդից: Նման նոր հերոսի հատկանիշները նկատելի են արդեն Ալեքսել Տոլստոյի «Աելիտա» և «Ինժեներ Գարինի հիպերբոլոիդը» գիտաֆանտաստիկական վեպերում, հանձին Գուսևի և Շելգայի: Այս երկերի պաթոսը ժողովրդի, հայրենիքի հետ միասնության, նոր կյանքի ստեղծման ձգտումն է, որով համակված են հերոսները, և որի շնորհիվ նրանք տոգորվում են գործելու եռանդով, ապագայի հավատով ու դառնում անպարտելի: Միաժամանակ արվեստագետը ցույց է տալիս դատապարտվածությունը բոլոր նրանց, ովքեր իրենց հակադրում են ժողովրդին: Իրեն գերմարդ երևակայող անհատապաշտ Գարինի կերպարում Ալեքսեյ Տոլստոյը պսակազերծում է ավանդական «միայնակ հերոսներին», ի ցույց դնում ռոմանտիկայից զերծ նրանց էությունը:

Ալեքսեյ Տոլստոյի գիտաֆանտաստիկական երկերը գեղարվեստական առումով ունեն այնպիսի հատկանիշներ, որ բնորոշ են գրողի ամբողջ ստեղծագործությանը՝ պատումի

ռեալիստական երանգավորում, սոցիալական-փիլիսոփայական թեմայի լայն մարմնավորում, հերոսների սոցիալական և հոգեբանական բնութագրման բազմակողմանիություն ու հստակություն: Նրա համար բնորոշ է հասարակական խոշոր իրադարձությունների էպիկական վերարտադրումը:

Սակայն Ալեքսեյ Տոլստոյի ռեալիստական արվեստը միշտ էլ մարդկային է. ինչ էլ պատկերի գրողը, նրա ուշադրության կենտրոնում մարդն է՝ իր դրսևորումների ողջ բազմազանությամբ:

«Ինժեներ Գարինի հիպերբոլոիդը» վեպն աչքի է ընկնում բարդ ու գրավիչ սյուժետային գծով, սուր կոնֆլիկտներով, հարաճուն գործողությամբ: Գրողն այստեղ հասել է ճշմարիտ հետաքրքրաշարժության, որ մեծապես կանխորոշել է երկի հաջողությունն ընթերցողների շրջանում:

Ալեքսեյ Տոլստոյը մեծ նշանակություն էր տալիս իր երկերի գիտական կողմի ճշգրտությանը: Գեղարվեստական ստեղծագործության մեջ շոշափվող տեխնիկական պրոբլեմի համակողմանի ուսումնասիրումը նա պարտադիր պայման էր համարում գիտաֆանտաստիկական ժանրի երկ ստեղծելիս:

Այս կապակցությամբ նա վարպետության վերաբերյալ հարցաթերթիկում գրել է. «Ես օգտվում եմ ամեն տեսակ նյութերից, սկսած մասնագիտական գրքերից (ֆիզիկա, աստղաբաշխություն, գեոքիմիա) մինչև անեկդոտներ: Երբ գրում էի «Ինժեներ Գարինի հիպերբոլոիդը» (իմ վաղեմի ծանոթներից մեկը՝ Օլենինը, նման կրկնակ հիպերբոլոիդի ստեղծման հավաստի մի պատմություն է արել ինձ: Այդ գյուտի հեղինակը մեռել է 1918-ին, Սիբիրում), ստիպված էի ծանոթանալ մոլեկուլային ֆիզիկայի նորագույն տեսություններին: Ինձ շատ օգնեց ակադեմիկոս Լազարևը»:

Արկածային սյուժեն, սոցիալական ու գիտական հետաքրքրաշարժ ֆանտաստիկան «Ինժեներ Գարինի հիպերբոլոիդը» վեպում զուգորդվում են այժմեական ու հրատապ քաղաքական թեմային: Երկի գլխավոր գաղափարը կապիտալիստական հասարակության մեջ գիտության ճակատագրի պատկերումն է, բուրժուական գրականության մեջ տարածված անհատապաշտ հերոսի, «ուժեղ անհատի» պսակազերծումը, աշխարհի վրանսահմանափակ դիկտատուրա հաստատելու՝ կապիտալիստական մոնոպոլիաների վերնախավի ձգտման մերկացումը:

Գրողը կապիտալիստական աշխարհի պատկերը ներկայացրել է վատ, եսասիրական զորությամբ լի կերպարներով, տպավորիչ բնութագրումներրով:

Ալեքսեյ Տոլստոյի գիտաֆանտաստիկական երկերի սոցիալական թեման պատմական իրականության ռեալ փաստերի ծնունդ է: Դեռ քսանական թվականների սկզբին գրողը խորաթափանցորեն նկատել է ֆաշիզմի՝ պլուտոկրատիայի իշխանության առավել ռեակցիոն, բացահայտորեն տեռորիստական ձևի սկզբնավորումը, որ նպատակ ուներ ճնշել աշխատավորության ազատագրական շարժումը:

Գրողը մեծ համոզչությամբ է ընդգծում ժողովուրդների անպարտելիության գաղափարը, ողջ մարդկությանը ստրկացնել տենչող իմպերիալիստական բոլոր ավանտյուրիստների կործանման պատմական անխուսափելիությունը: Աշխարհի բախտն, ի վերջո, աշխատավոր ժողովրդի ձեռքին է: Եվ օրինաչափ է «Ինժեներ Գարինի հիպերբոլոիդը» վեպի ավարտը, որ ցույց է տալիս ժողովուրդների ամենազորությունն ու աշխարհը նվաճելու ցնորական գաղափարների ձախողումը:

Ալեքսեյ Տոլստոյի երկերը, այդ թվում նաև «Ինժեներ Գարինի հիպերբոլոիդը» վեպը, ակնառու կերպով բացահայտում են հեղինակի կրքոտ ձգտումը՝ քայլել կյանքին համընթաց.

ռեալիստորեն ճշմարտացի պատկերել իրականությունը, արվեստի միջոցներով սեփական պատասխանը տալ հասարակական սուր հարցերին:

Վ. ՇՉԵՐԲԻՆԱ